



Office in Yerevan

Երևան, 25 մայիսի 2006

Հարգելի գործընկերներ,

Զեզ ենք ներկայացնում 2005 թ.-ին տեղի ունեցած երկու կլոր սեղանի քննարկումների արձանագրությունները, որոնք Հայաստանում Ուղղորդման ազգային մեխանիզմի (ՈՒԱՄ) զարգացման գործընթացին աջակցելու նպատակ էին հետապնդում:

ԵԱՀԿ Երևանի գրասենյակի կողմից և ԵԱՀԿ ԺՅՄԻԳ-ի համագործակցությամբ կազմակերպված այս կլոր սեղանները համապատասխան ոլորտների բոլոր գործող անձանց մասնակցությամբ աշխատանքային քննարկումների հնարավորություն ստեղծեցին՝ առկա հիմնախնդիրները վերհանելու և դրանց հնարավոր լուծումների շուրջ քննարկումներ անցկացնելու նպատակով։ Մասնակիցների թվում էին Տրաֆիկինգի դեմ պայքարի պետական միջգերատեսչական հանձնաժողովի, իրավապահ մարմինների, սահմանապահների, տուժածներին աջակցող ՀԿ-ների, հյուպատոսական ծառայությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև այս խնդիրներով զբաղվող այլ անձինք։

Նշված երկու կլոր սեղանների աշխատանքային ծևաչափերը տարբեր էին, քանի որ տարբեր էին այդ քննարկումների նպատակները։ Առաջին միջոցառումը միտված էր մանրամասն տեղեկատվություն տրամադրելու Ուղղորդման ազգային մեխանիզմի և նրա գործառույթների, կիրառելի միջազգային չափանիշների և կուտակված գիտելիքների վերաբերյալ։ Երկրորդն ի մի էր բերել ազգային և միջազգային գործիչներին նպատակ ունենալով փորձի փոխանակում կազմակերպել գոհերի նույնականացման խնդրի շուրջ, որն Ուղղորդման ազգային մեխանիզմի հաջող կիրառման անկյունաքարերից է։

Հուսով ենք, որ այս արձանագրություններն օգտակար կլինեն Ուղղորդման ազգային մեխանիզմի գործնական կիրառման ընթացքում և հակատրաֆիկինգային նոր ծրագրերի և ռազմավարությունների մշակման ժամանակ։

Մեր երախտագիտությունն ենք հայտնում Աստրիդ Գանտերերին /ԺՅՄԻԳ/, Օվսաննա Բաբայանին /ԵԱՀԿ Երևանի գրասենյակ/ , Յուլիա Շանդիսայդին /ԵԱՀԿ Երևանի գրասենյակ/, Մարկ Սմիթին /Մեծ Բրիտանիայի Ոստիկանություն/ և Իվետա Բարտունիկովային /անկախ փորձագետ/՝ կլոր սեղանի քննարկումների ընթացքում մեծ ներդրում ունենալու համար։ Կլոր սեղանի քննարկումները հնարավոր չեն լինի առանց ԱՍՍ Պետդեպարտամենտի և ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի անգնահատելի աջակցության։

Լավագույն մաղթանքներով,

Բլանկա Հանչիլովա, Գ.Թ.

ԵԱՀԿ Երևանի գրասենյակ
Ժողովրդավարության զարգացման ծրագրի ղեկավար



Office in Yerevan

**ՏՐԱՖԻԿԻՆԳԻ ԶՈՐԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ
ՊԱՇՏՊԱՍՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՂՈՌԴՄԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՄԵԽԱՆԻՉՄԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՇՈՒՐՋ ԿԼՈՐ ՍԵՂԱՆԻ
ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Կազմակերպված ԵԱՀԿ Երևանի գրասենյակի կողմից՝
ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի և ԱՄՆ
Պետդեպարտամենտի աջակցությամբ

Հունիս և հոկտեմբեր, 2005 թ.

ԵԱՀԿ Երևանի գրասենյակ
ժողովրդավարության զարգացման ծրագիր
Փետրվար, 2006 թ.

ԵԱՀԿ Երևանի գրասենյակ
Տերյան 89, 1009 Երևան, Հայաստան
Հեռ: + 374 10/ 54 10 62/3/4/5
Ֆաք: + 374 10/ 54 10 61

Բլանկա Հանչիլովա
Blanka.hancilova@osce.org; blanka@hancil.net
Ժողովրդավարացման զարգացման ծրագրերի պատասխանատու

Օվսաննա Բաբայան
Ovsanna.babayan@osce.org
Միզրացիայի և տրաֆիկինգի հարցերով փորձագետ

Ծովինար Արևյան
Tsovinar.arevyan@osce.org
Ժողովրդավարության զարգացման հարցերով
ավագ օգնական

Ծովինար Հարությունյան
Tsovinar.harutyunyan@osce.org
Մարդու իրավունքների և ժողովրդավարության
զարգացման ծրագրերի օգնական

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ի՞նք է ՈՒՂՈՐԴՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՍԵԽԱՆԻՉՄԱՆ (ՈւԱՄ)	5
Ի՞նչ է մարդկանց տրաֆիկինգը	6
Ի՞նչ է ուղղորդման ազգային մեխանիզմը	7
Ուղղորդման ազգային մեխանիզմներ իրականացնելու ութ պատճառ	8
ՈՒՂՈՐԴՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՍԵԽԱՆԻՉՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԱՌԱՋԻՆ ԿԼՈՐ ՍԵՂԱՆ	9
Ելույթների ամփոփագրեր	9
Ի՞նչ է ուղղորդման ազգային մեխանիզմը	10
Առաջարկներ Հայաստանում ՈւԱՄ ստեղծելու վերաբերյալ	11
Առաջարկություններ քեմատիկ խմբերի կողմից	11
ՈՒՂՈՐԴՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՍԵԽԱՆԻՉՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԵՐԿՐՈՐԴ ԿԼՈՐ ՍԵՂԱՆ	14
Խմբային աշխատանքի եզրակացություններ	14
Արդյունավետ պրակտիկայի երեք բաղադրիչներ	17

Ի՞ՆՉ Է ՄԱՐԴԿԱՆՑ ՏՐԱՖԻԿԻՆԳԸ

Ի՞ՆՉ Է ՄԱՐԴԿԱՆՑ ՏՐԱՖԻԿԻՆԳԸ

Մարդկանց տրաֆիկինգի համընդիանուր ընդունված սահմանումը տրված է «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ Սիավորված Ազգերի Կազմակերպության Կոնվենցիա»-ն («ԱԿՀ Կոնվենցիա») լրացնող՝ «Մարդկանց, հատկապես կանաց և երեխաների տրաֆիկինգի կանխարգելման, արգելման և դրա համար պատժի մասին արձանագրության» («Տրաֆիկինգի արձանագրություն») Հոդված 3(ա)-ում և վերահաստատված է «Մարդկանց տրաֆիկինգի դեմ պայքարի մասին Վարչավյան Կոնվենցիա»-ում («Տրաֆիկինգի դեմ պայքարի մասին Վարչավյան Կոնվենցիա»): Այնտեղ նշվում է հետևյալը.

«մարդկանց տրաֆիկինգ նշանակում է շահագործման նպատակով մարդկանց հավաքագրում, տեղափոխում, փոխանցում, բարցնում կամ ընդունում, որն իրականացվում է ուժի սպառնալիքով կամ ուժի գործադրմամբ և հարկադրանքի այլ միջոցների, առևանգման, խարդախության, խարեւության, իշխանության կամ վիճակի խոցելիության չարաշահման և մարդկանց վերահսկող անձի համաձայնությունը ստանալու համար նրան վճարելու կամ այլ օգուտ տալու ճանապարհով: Շահագործումը նվազագույնը ներառում է այլ անձանց մարմնավաճառության շահագործումը կամ սեռական շահագործման այլ ձևեր, հարկադիր աշխատանքը կամ ծառայությունները, ստրկությունը կամ ստրկությանը հավասարազոր պրակտիկան, անազատ վիճակը կամ մարդու օրգանների հեռացումը»:

Այսպիսով, մարդկանց տրաֆիկինգ հանցատեսակը պարունակում է հետևյալ տարրերը՝

- 1) Գործողություններ՝ «մարդկանց հավաքագրում, տեղափոխում, փոխանցում, բարցնում կամ ընդունում»
- 2) Սիջոցներ՝ «ուժի սպառնալիք կամ ուժի գործադրում և հարկադրանքի այլ միջոցներ, առևանգում, խարդախություն, խարեւություն, իշխանության կամ վիճակի խոցելիության չարաշահում, մարդկանց վերահսկող անձի համաձայնությունը ստանալու նպատակով նրան վճարում կամ այլ օգուտի տրամադրում»,
- 3) Նպատակ՝ շահագործում, որն առնվազն «ներառում է այլ անձանց մարմնավաճառության շահագործումը կամ սեռական շահագործման այլ ձևեր, հարկադիր աշխատանքը կամ ծառայությունները, ստրկությունը կամ ստրկությանը հավասարազոր պրակտիկան, անազատ վիճակը կամ մարդու օրգանների հեռացումը»:¹

Երեխաների տրաֆիկինգի դեպքում «միջոցներ» տարրը պարտադիր չէ տրաֆիկինգի հանցագործության հաստատման համար:²

¹ Հոդված 3 (ա), «Տրաֆիկինգի արձանագրություն»:

² Հոդված 3 (գ), «Տրաֆիկինգի արձանագրություն»: Տե՛ս նաև «Տրաֆիկինգի դեմ պայքարի մասին Վարչավյան Կոնվենցիա»-ի Հոդված 4 (գ):

ԲՆՇ Է ՈՒՂՂՈՐԴՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՍԵԽԱՆԻՉԱԾԸ

Ուղղորդման ազգային մեխանիզմը (ՈՒԱՄ)՝³ ստեղծում է համագործակցության մի դաշտ, որի միջոցով պետական օղակների ներկայացուցիչները իրագործում են տրաֆիկինգից տուժածների մարդու իրավունքների պաշտպանության իրենց պարտականությունները՝ քաղաքացիական հասարակության և տրաֆիկինգից տուժածների հետ գործ ունեցող այլ դերակատարների⁴ հետ համագործակցության և ռազմավարական գործընկերության պայմաններում:

Նշված մեխանիզմները պետք է ստեղծվեն վերջնակետային, տարանցիկ և ելակետային երկրներում, որպեսզի համընդգրկուն և բազմակողմանի աջակցության համակարգը ուղղված լինի տրաֆիկինգից տուժած բոլոր անձանց և հասու լինի նրանցից բոլորին:

Ուղղորդման ազգային մեխանիզմը պետք է ներառի՝

- Ուղենիշներ, որոնք հնարավորություն են տալիս ճշգրիտ նույնականացնել տրաֆիկինգի ենթարկված անձանց և պատշաճ վերաբերմունք ցուցաբերել նրանց հանդեպ, ինչը նախատեսում է հարգալից վերաբերմունք նրանց տեսակետների նկատմամբ և այդ մարդկանց անկախության ապահովում:
- Տրաֆիկինգից տուժածների ուղղորդում դեպի մասնագիտացված գործակալություններ, որոնք տրամադրում են ապաստան և ֆիզիկական ու հոգեբանական առավելագույն պաշտպանվածություն, այդ թվում՝ բուժօգնություն, սոցիալական և հոգեբանական աջակցություն, իրավաբանական ծառայություններ, օգնություն անձը հաստատող փաստարդություն ստացման, ինչպես նաև կամավոր հայրենադարձության կամ վերաբնակեցման հարցերում:
- Համապատասխան պարտադիր մեխանիզմների ստեղծում, որոնք կոչված պետք է լինեն տուժածներին ցուցաբերվող աջակցությունը և հետախուզական ու հետաքննական միջոցառումները ներդաշնակեցնելուն:
- ՈՒԱՄ-ում ներգրավված բոլոր դերակատարների պարտականությունները և լիազորությունները պետք է այնպես սահմանված լինեն, որ ապահովեն տրաֆիկինգի ենթարկված բոլոր անձանց մարդու իրավունքների պաշտպանությունը՝ անկախ իրավապահ մարմինների հետ համագործակցելու նրանց ցանկությունից:

³ Յայեցակարգը մշակվել է ԵԱՀԿ/ԺՌՄԻԳ-ի կողմից: Տե՛ս ԵԱՀԿ/ԺՌՄԻԳ, «Ուղղորդման ազգային մեխանիզմներ. Տրաֆիկինգի ենթարկված անձանց իրավունքների պաշտպանության ուղղությամբ ջանքերի համատեղում. Գործնական ձեռնարկ», Վարշավա, 2004 թ.:

⁴ Այդ դերակատարների թվում պետք է առաջին ընդգրկված լինեն հասարակական կազմակերպություններ, կամավորական խմբեր, համապատասխան պետական կառույցներ և հշխանությունները, իսկ որոշ դեպքերում՝ նաև համապատասխան միջազգային կազմակերպություններ:

ՈՒՂՂՈՐԴՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԵԽԱՆԻՉԱՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՈՒԹ- ՊԱՏճԱՌՆԵՐ

1. Տրաֆիկինգի ենթարկված անձինք ծանր հանցագործության զոհեր են: Նրանց իրավունքների պաշտպանությունը և օգնություն ստանալու համբնդանուր և անարգել հնարավորության ապահովումը պետք է համարել հակատրաֆիկինգային բոլոր միջոցառումների ամենաառաջնահերթ խնդիրը:
2. Մարդկանց տրաֆիկինգի դրսերումները բազմազան են: Այս հանցագործության դեմ պայքարի և պաշտպանության մեխանիզմները տրաֆիկինգի ենթարկված բոլոր անձանց հասանելի դարձնելու համակարգը պետք է այնքան ճկուն լինի, որ կարողանա արագորեն հայտնաբերել տրաֆիկինգի բոլոր դեպքերը և արձագանքել դրանց:
3. Տրաֆիկինգի ենթարկված անձինք ներառում են կանանց, տղանարդկանց և երեխաներին, ովքեր հնարավոր է շահագործված լինեն հարկադիր աշխատանքային պայմաններում, այնպիսի պաշտոնական կամ ոչ պաշտոնական ոլորտներում, ինչպիսիք են մուրացկանությունը, շինարարությունը, սեռական ծառայությունների ոլորտը, գյուղատնտեսությունը և տնային տնտեսությունը ինչպես արտասահմանում, այնպես էլ երկրի ներսում: Պաշտպանության մեխանիզմը պետք է հասանելի լինի և աջակցություն երաշխավորի տուժածների բոլոր կատեգորիաներին:
4. Թեև տրաֆիկինգի ենթարկված բոլոր անձինք միևնույն հանցագործության զոհեր են, նրանց բնութագրերը նույնը չեն: Աջակցության և պաշտպանության մեխանիզմը պետք է ներառի տարբեր մասնագիտացված ծառայությունների լայն շրջանակ, որոնք կրավարարեն յուրաքանչյուր անհատի առանձնահատուկ կարիքները, ինչպիսիք են ապաստանը, հոգեբանական, բժշկական և իրավաբանական խորհրդատվությունն ու կրթությունը:
5. Տրաֆիկինգով գրաղփող մարդկանց հետաքննությունը և քրեական պատասխանատվության կանչելը հազարեա է հաջողությամբ պասկվում՝ առանց տրաֆիկինգի ենթարկված անձանց ցուցմունքների: Երաշխավորված անվտանգությունը, ապաստանը, անկախ խորհրդատվությունը, հանգիստ պայմաններում որոշում կայացնելու հնարավորությունը, ինչպես նաև վկաների արդյունավետ պաշտպանությունը կարևոր նախապայմաններ են տրաֆիկինգի ենթարկված անձանց կողմից հանցագործության մասին հայտնելու և իշխանությունների հետ համագործակցելու մասին մտածելու համար: Միայն կայուն վիճակում հայտնված տուժածն է կարող հանդես գալ որպես հուսալի վկա և իր լուման ներդնել հետաքննության հաջող ընթացքին:
6. Մարդկանց տրաֆիկինգը բարդ երևույթ է, որը պահանջում է տարատեսակ արձագանքներ՝ քաղաքականության բազմաթիվ ու տարբեր ոլորտներում, ինչպիսիք են միզուացիոն միջոցառումները, կոռուպցիայի, կազմակերպված հանցագործության, հարկադիր աշխատանքի, ստվերային աշխատանքի դեմ պայքարը և անվտանգությունը: Բազմակողմանի և անդրտեկտորային մոտեցումները, որոնք ընդգրկում են կառավարության և քաղաքացիական հասարակության, իսկ որոշ դեպքերում՝ նաև միջազգային կազմակերպությունների բոլոր համապատասխան դերակատարներին, կարևոր նախապայման են այս երևույթի դեմ պայքարի արդյունավետության համար:
7. Քանի որ մարդկանց տրաֆիկինգի ծավալներն ու բնույթը տարբեր երկրներում տարբեր են, յուրաքանչյուր երկրի պետական արձագանքն այդ երևույթին պետք է համապատասխանեցվի այդ տարբերություններին: Մարդու իրավունքների միջազգային չափանիշների վրա խարսխված պաշտպանության մեխանիզմի կիրառման ժամանակ պետք է հաշվի առնել տվյալ երկրի օրենսդրությունը, սահմանադրական կառուցվածքը, հանձնառություններն ու պարտավորությունները, ինչպես նաև պետական ու ոչ պետական հատկանիշների ենթակառուցվածքները: Գոյություն ունեցող պետական կարողությունների գնահատումն ու գարգացումը, ապա՝ այդ կարողությունների շարունակական ընդլայնումն ու

վերապատրաստման միջոցով զարգացումը թույլ կտա անել այնպես, որ ազգային համակարգն ընդունվի բոլոր շահագրգիռ դերակատարների կողմից:

8. Ուղղորդման ազգային մեխանիզմները տրաֆիկինգի դեմ պայքարի և դրանից տուժածներին աջակցելու տարածաշրջանային և միջազգային արդյունավետ համագործակցության բաղկացուցիչ մասերն են:

ՈՒՂՂՈՐԴՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԵԽԱՆԻԶՄԻ ՀԱՐՑԵՐՈՎ ԱՌԱՋԻՆ ԿԼՈՐ ՍԵՂԱՆԸ

2005 թ. հունիսի 15-ին ԵԱՀԿ Երևանի գրասենյակը կազմակերպել էր Ուղղորդման ազգային մեխանիզմի հարցերով առաջին կլոր սեղանը, որի ժամանակ քննության առարկա դարձան երկրում բարեհաջող գործող ՈՒԱՄ ունենալու առավելությունները:

ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳՐԵՐ

Տրաֆիկինգի դեմ պայքարի միջգերատեսչական հանձնախմբի նախագահ Վալերի Սկրտումյանի բացման խոսքը

Արդեն երեք տարի է, ինչ տրաֆիկինգի դեմ պայքարը գտնվում է ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում: Բարձրացվել է հանրության իրազեկության մակարդակը, և մեր հասարակությունն ավելի մանրամասն է ծանոթացել տրաֆիկինգի խնդիրն՝ տարբեր միջոցառումների և միջազգային կազմակերպությունների շնորհիվ:

Հայաստանն ընդունել է Գործողությունների ազգային ծրագիր, և կառավարությունը աստիճանաբար կյանքի է կոչում դրա դրույթները: Կարևոր է, որ գործընթացը համակարգվի կառավարության և քաղաքացիական հասարակության միջև: Միջգերատեսչական հանձնախումբը մասնակցել է ազգային օրենսդրությունը միջազգային պայմանագրերի հետ ներդաշնակեցնելու գործին և հորդորել է, որպեսզի կառավարությունը ստորագրի հանապատասխան միջազգային կոնվենցիաներն ու հուշագրերը: Այսօրվա խնդիրը Գործողությունների ազգային ծրագրի իրականացումն է:

Տրաֆիկինգը ընդհանրապես՝ թմրանյութերի, գենքի և թե մարդկանց, վտանգ է ներկայացնում ազգային անվտանգությանը: Սառը պատերազմի ավարտը նոր հնարավորություններ բացեց ազատ տեղաշարժման տեսակետից, սակայն և նոր խնդիրներ ստեղծեց անկանոն միգրացիայի հետ կապված: Տրաֆիկինգի կազմակերպիչները սահմանները չեն ճանաչում և բացասական ազդեցություն են ունենում տարածաշրջանի երկրների վրա: Անհրաժեշտ է համապարփակ քայլեր ձեռնարկել հետևյալ ոլորտներում.

- Տուժածների նույնականացում, վերադարձ/հայրենադարում, աջակցություն տուժածներին, մասնագիտական վերապատրաստում և վերահնտեղում աշխատումի շուկայում,
- Տարածաշրջանային համագործակցություն,
- Հետաքննություն, ներառյալ ոստիկանության և իրավապահ մարմինների գործողություններ: Առաջնային խնդիր է հետաքննության մեթոդների կատարելագործումը:

Արժեք նշել, որ ըստ տրաֆիկինգի վերաբերյալ ԱՄՆ Պետդեպարտամենտի գեկույցի (TIP)՝ Հայաստանում այս ոլորտի հիմնական բացքողումը պատժի/հետաքննության հարցերում առաջնադաշտական բացակայությունն է: Տրաֆիկինգի հետ առնչվող 16 գործերից առայժմ միայն մեկն է դիտարկվել Հոդված 132-ով: Մեր նպատակն է Հայաստանն ընդգրկել TIP գեկույցի 1-ին

մակարդակում: Այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ է կատարելագործել սոցիալական, կրթական և աջակցության միջոցառումները:

ԲՆՇ Է ՈՒՂՂՈՐԴՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՍԵԽԱՆԻՉՈՒԾ (ՈՒԱՄ)

ԺՀՄԻԳ-ի հակատրաֆիկինգային հարցերով փորձագետ Աստրիդ Գանտերերի ելույթը

Հայաստանին հարկ է ողջունել Եվրոպայի Խորհրդի՝ Մարդկանց տրաֆիկինգի դեմ պայքարի միջոցների մասին կոնվենցիան ստորագրած առաջին երկրներից մեկը լինելու կապակցությամբ: Կոնվենցիան նպատակ ունի զգալիորեն ընդլայնել տուժածներին աջակցության համակարգը: Աջակցությունը պետք է հասանելի լինի բոլոր տուժածներին, քանի որ նրանք տրաֆիկինգի դեմ պայքարին կարող են նպաստել միայն արդյունավետ աջակցություն ստանալու պարագայում:

ՈՒԱՄ-ը համագործակցության մի համակարգ է, որի միջոցով պետական մարմիններն իրականացնում են տրաֆիկինգի ենթարկված անձանց մարդու իրավունքների պաշտպանության իրենց պարտավորությունը՝ հասարակության հետ ուղղավարական գործընկերության պայմաններում: Դրա առանցքային բաղադրիչը կառավարության և քաղաքացիական հասարակության համագործակցությունն է: Այս համագործակցությունը պետք է լինի նպատակային և հիմնված լինի մասնակցության և համագործակցության սկզբունքների վրա. այն պետք է ընդգրկի այն կազմակերպությունները, որոնք իրականացն աջակցություն են տրամադրում տուժածներին: Հաճախ այդ բոլոր դերակատարների միջև որոշակի լարվածություն գոյություն ունի, սակայն փորձը ցույց է տալիս, որ կառավարություններն ու ՀԿ-ները կարող են արդյունավետ աշխատել միասին: ԵԱՀԿ-ին անդամակցող շատ երկրներում ՀԿ-ները մեծ ցանկություն ունեն օգնելու կառավարություններին:

Խիստ կարևոր է որդեգրել զոհերի նույնականացման ու աջակցության համապարփակ ու ընդլայնված մոտեցում, ընդունելով, որ միայն դատարանը չէ, որ նույնականացնում է զոհերին: Տուժածներին նույնականացնելու գործում անհրաժեշտ է հնարավորինս մեծ թվով դերակատարների, այդ թվում՝ սոցիալական աշխատողների, բժիշկների, հիվանդանոցների, ՀԿ-ների և իրավապահ մարմնների մասնակցությունը: Տուժածներին նույնականացնելուց հետո հաջորդ քայլը պետք է լինի նրանց օգնելը և ոչ թե պատժելը, և ոչ էլ նրանց պարտադիր վկայությունը: Աջակցությունը պետք է առաջարկվի և տրամադրվի այն դեպքերում, եթե բավարար հիմքեր կան ենթադրելու, որ տվյալ անձն իրոք տրաֆիկինգի զոհ է՝ անկախ քրեական դատավարության արդյունքներից: Աջակցությունը պետք է ներառի պատշաճ կացարան, բուժօգնություն, հոգեբանական ծառայություններ, ֆիզիկական պաշտպանություն և իրավական օգնություն: Տուժածներն ավելի հակած են իշխանությունների հետ համագործակցելու՝ համապատասխան օժանդակություն ստացած լինելու պարագայում:

ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՈՒԱՄ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**ԵԱՀԿ երևանի գրասենյակի Ժողովրդավարության զարգացման ծրագրի ղեկավար Քլանկա
Հանչիլովայի ելույթը**

Ելույթի իհմքում ընկած է 2005 թ. փետրվարին տ-ն Բերբել Ուի կողմից իրականացված ՈՒԱՄ-ի նախնական գնահատումը:

1. **Ինստիտուցիոնալ համակարգի ակտիվացում.** Անհրաժեշտ է մի այնպիսի համակարգող պետական մարմնի ստեղծում, որը կներգրավի բոլոր շահագրգիռ կողմերը և որոնք ներկայացված կլինեն այնպիսի մակարդակով, որ կարողանան ընդունել պարտավորեցնող որոշումներ:
2. **Ամրապնդել տուժածներին նույնականացնելու բնթացակարգերը.** Ամրապնդել կապերը իրավապահ մարմինների և հանրության հետ աշխատող կազմակերպությունների միջև: Օժանդակել «թեժ գիծ» ծառայություններին:
3. **Պաշտոնական համագործակցություն ծավալել ծառայություն մատուցողների և իրավապահ մարմինների միջև.** Պաշտոնականացնել իրավապահ մարմինների և հանրության հետ աշխատող կազմակերպությունների համագործակցությունը:
4. **Ստեղծել ընդունարան/կենտրոն.** Կենտրոնում կարելի է տրամադրել առաջին խորհրդատվությունը, գնահատել տուժածի կարիքները և առաջարկել մասնագիտացված ծառայություններ, կամ էլ ուղղորդել նրանց դեպի այդպիսի ծառայություններ:
5. **Ամրապնդել տարածաշրջանային համագործակցությունը,** ինչպես կառավարությունների, այնպես էլ հանրության հետ աշխատող կազմակերպությունների միջև:
6. **Ստեղծել վերադարձի և վերահստեղուման մեխանիզմներ.** Պարզեցնել ճամփորդական փաստարդերի վերականգնման կարգը, հոգալ վերադարձի ճանապարհածախար, ապահովել անվտանգությունը և սոցիալական ներգրավումը:

Կարևոր է հստակ պատկերացնել, թե ինչպես են տարրեր դերակատարները փոխգործակցելու հակատրաֆիկինգային պայքարի յուրաքանչյուր փուլում. առանց ուղղորդման մեխանիզմի մեջ ներգրավված և իրենց պարտականություններն ու դերը հասկացող բոլոր դերակատարների միջև հստակ կապերի, համապարփակ ծառայություններ տրամադրելը հնարավոր չէ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԹԵՍԱՏԻԿ ԽՄԲԵՐԻ ԿՈՂՄԻՑ

ԽՈՒՄԲ Ա – ՈՒԱՄ ՀԱՍՏԱԿԱՐԳՈՒՄ

Օժանդակող՝ Տարածքային կառավարման նախարարությանը կից Սիգուացիոն գործակալության պետի տեղակալ Լյալյա Ասլանյան

Բարեկավել համակարգումը. Ներկայում հակատրաֆիկինգային գործունեությունը համակարգում է միայն մեկ մարմին՝ Սիգուատեսչական հանձննախումբը: Հանձննախումբը պետք է ձևավորվի այնպես, որպեսզի նրանում ներառվեն տրաֆիկինգի խնդիրներով այսօր գրաղվող ՀԿ-ների ներկայացուցիչները: Ներկայում Սիգուատեսչական հանձննախումբը գործում է:

Արտգործնախարարության հովանու ներքո: Սիգուե ավելի արդյունավետ կլինի, եթե համակարգող մարմինն իր ձևաչափով ավելի շատ նմանվի աշխատանքային խմբի, որի անդամները հավասար կարգավիճակ կունենան և որևէ մեկ մարմին հանդես չի գտնածագործող դերում: Դա պետք է աշխատող կառույց լինի, որի մեջ ընդգրկված կլինեն անմիջապես տրաֆիկինգի խնդիրներով գրաղվող մարդիկ:

Աշխատանքային խմբի ձևավորում. Ներկայում գոյություն ունի իրավապահ մարմինների աշխատանքային խումբ, որը գրավում է հակատրաֆիկինգային օրենսդրության բացերը լրացնելու խնդիրներով: Անհրաժեշտ է ստեղծել մի երկրորդ աշխատանքային խումբ, որը կգրադադար կառավարության և հասարակական սեկտորի հարաբերությունները ֆորմալ տեսքի բերելով:

Ստեղծել մոնիթորինգի խումբ. Խումբը պետք է վերահսկի Հայաստանում հակատրաֆիկինգային ողջ գործունեությունը: Նրա կազմում պետք է ընդգրկվեն ներկայացուցիչներ երեք աղբյուրներից՝ պետական մարմիններից, ՀԿ-ներից և միջազգային կազմակերպություններից: Այն պետք է պարբերաբար վերլուծի և գնահատի առաջինադառնումն ու միտումները, մշակի առաջարկներ և դրանք պարբերաբար ներկայացնի Միջզերատեչական հանձնախմբին: Այն պետք է նաև մասնակցություն ունենա Գործողությունների ազգային ծրագրի (օրենսդրություն, կանխարգելում, տուժածներին առողջապահական և այլ աջակցություն) իրականացմանը:

ԽՈՒՄԲ Բ. ՏՈՒԺԱԾՆԵՐԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՄ

Օժանդակող՝ ԵԱՀԿ Երևանի գրասենյակի միգրացիայի և հակատրաֆիկինգային հարցերով փորձագետ Օվսաննա Բարայան

Առաջին արձագանքողների բազմազանության ապահովման միջոցով բարելավել տուժածների նույնականացման գործընթացը. Առաջին արձագանքողները պետք է լինեն ոստիկանությունը, իրավապահ այլ մարմինները, համայնքի ղեկավարները, սոցիալական աշխատողները, հյուպատոսական աշխատողները, բուժաշխատողները և սահմանապահները, և բոլորը պետք է համապատասխան վերապատրաստում անցած լինեն: Կարևոր է կարողանալ հստակ պատկերացնել, թե ինչպես պետք է համատեղ ջանքերով դասակարգել կամ հայտնաբերել տուժածներին: Սակայն այս պահին հստակ սահմանումներ կամ մեթոդներ գոյություն չունեն, որոնցով կարելի է առաջնորդվել: Ոստիկանության տրամադրության տակ կան հարցաշարեր, որ նրանք կարող են օգտագործել: Նրանք պետք է այդ հարցաշարերը տրամադրեն մյուսներին և միասին մտածեն, թե ինչպես կարելի է դրանք փոփոխել, եթե դրա անհրաժեշտությունը կա: Տվյալ պահին տարբեր կազմակերպություններ տարբեր հարցաշարեր են օգտագործում, և հնարավորության դեպքում դրանք պետք է միասնականացնել:

Հասող ծերնարկ ստեղծել շահագրգիռ կազմակերպությունների համար. Ցուրաբանչյուր կազմակերպություն պետք է հստակ պատկերացում ունենա իր դերի մասին: Ձեռնարկը պետք է լինի շատ մանրամասն: Այն պետք է պարունակի տեղեկություններ այն մասին, թե տուժածին որքան ժամանակ կարելի է պահել կազմակերպությունում և ինչպիսի տեղեկություններ կարելի է տարածել: Միգրություն արժե աշխատանքային խումբ ստեղծել՝ հետագա քննարկումներից հետո մի այդպիսի ձեռնարկ մշակելու համար:

Շեշտել միասնական ջանքերով տուժածների նույնականացման կարևորությունը. Տուժածների նույնականացումը պետք է կատարվի միասնական ջանքերով, և ոչ մի կազմակերպություն այս հարցում մենաշնորհ չպետք է ունենա:

Ակտիվացնել աշխատանքի տեսչական ստուգումները. Լավ կլինիկ տեսչական ստուգումները հենց այսօր դարձնել տուժածների նույնականացման գործընթացի մի մաս: Դրանք կարող են օգնել երկրի ներսում կատարվող կամ տարանցիկ տրաֆիկինգի զոհերին նույնականացնելու հարցում այն դեպքերում, եթե Հայաստանը հանդես է գալիս որպես տրաֆիկինգի տարանցիկ երկիր:

Ստեղծել մոնիթորինգի խումբ. Խումբը պետք է ընդգրկի մի շարք մասնագետներ, ովքեր գրավում են միայն տրաֆիկինգի հարցերով: Այս մասնագետները պետք է լիովին նվիրված լինեն այս խնդիրին. մասնագետների խումբը պետք է ղեկավարի ազգային համակարգողը: Այն պետք է տեղեկություններ հավաքի, վերլուծի դրանք, առաջարկություններ ներկայացնի և որոշ համակարգող դեր խաղա դրանց իրագործման ժամանակ:

ԽՈՒՄԲ Գ. ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՈՒԺԱԾՆԵՐԻՆ

Օժանդակող՝ UMCOR-ի ծրագրերի ղեկավար Վիկտորիա Ավակովա

Բարելավել համազործակցությունը իրավապահ մարմինների հետ. Սա շատ կարևոր է, քանի որ տարբեր մարմիններ տուժածներին հաճախ ուղարկում են ՀԿ-ներ՝ օգնություն ստանալու համար: Անհրաժեշտ է պաշտոնականացնել այս գործընթացը, մշակել հատուկ ընթացակարգեր, ստեղծել փաստաթղթերի փաթեթ, որը կմանրամասնի, թե ինչ կարգի տեղեկություններ պիտի տրամադրվեն տուժածներին: ՀԿ-ները տուժածներին ծառայություններ մատուցելու գործում իրենց մասնակցության պահից ի վեր կիսում են տուժածների հետ կապված ոխսերը: Ուստի անհրաժեշտ է որոշակիացնել, թե տուժածի մասին ինչ ծավալի տեղեկություններ պետք է տրամադրվեն իրավապահներին կամ հետարքնության հետ կապված մարմիններին: Եթե տուժածներն աշխատում են ՀԿ-ների հետ, նրանց խոստանում են պահպանել գաղտնիություն: Ուստի տեղեկությունների տրամադրումը այլ մարմիններին կարող է դիտվել որպես մարդու իրավունքների ոտնահարում:

Այս անձինք, ովքեր փաստաթուղթ չունեն, պետք է ստանան վերաբարձի հատուկ անձնագիր: Դա կարող է շատ երկար տևել, ինչը կարող է բացահայտ դարձնել այն փաստը, որ տվյալ անձը տրաֆիկին է ենթարկվել: Սա կարող է հանգեցնել գաղտնիության խախտման: Արտգործնախարարությունը վերադարձի գործընթացը պետք է դարձնի առավել կոնֆիդենցիալ և արդյունավետ:

Տրաֆիկինգի հմարավոր տուժածների համար հայրենադարձման գործընթացը դարձնել առավել ծլուն. Հարազատներին պետք է քույլատրել տուժածների անունից դիմել հայրենադարձման գործընթացն սկսելու համար:

Բարձրացնել պետական պաշտոնյաների իրազեկության մակարդակը. Կառավարության մակարդակով որևէ խնդիր լուծելու համար խիստ անհրաժեշտ է պետական պաշտոնյաների համագործակցությունը: Պաշտոնյաներից ոմանք երեմն ամբողջությամբ չեն ըմբռնում խնդրի էռթյունը:

Վերահստեղումնան հարցերում որդեգրել քազմակողմ մոտեցում. Անհրաժեշտ է ստեղծել վերահստեղումնան համար նախատեսված սոցիալական միջոցառումների փաթեթ, որը պետք է ներառի ժամանակավոր որոշ ֆինանսական օգնություն (թեպետև փոքր), նոր կյանք սկսելու համար վերապատրաստում և մասնագիտական կողմնորոշում, կացարան (տուժածները մնալու տեղ չեն ունենում) և գուցե միկրովարկավորում, շնայած որ վերջինս երկարաժամկետ խնդիր է, և տուժածները հաճախ չեն կարող նման պատասխանատվություն վերցնել իրենց վրա: ՀԿ-ները կարող են սկսել սոցիալական խնդեղումն գործընթացը, որի շարունակությունը որոշ փուլերից կարող է ստանձնել պետությունը: Տրաֆիկինգի տուժածների վերահստեղումն ծրագրերի ֆինանսավորումը կարելի է իրականացնել առգրավված գույքի և ունեցվածքի միջոցներից:

ՈՒՂԴՈՐԴՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԵԽԱՆԻՉՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԵՐԿՐՈՐԴ ԿԼՈՐ ՄԵՂԱՆ

2005 թ. հոկտեմբերի 27-ին ԵԱՀԿ Երևանի գրասենյակը կազմակերպել էր Ուղղորդման ազգային մեխանիզմի հարցերով երկրորդ կլոր սեղանը, որը նվիրված էր տրաֆիկինգի տուժածների հայտնաբերման խնդիրներին:

ԲԱՑՍԱՆ ԽՈՍՔ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁԱԽՄԱԲԻ ԱՆՈՒՆԻՑ

Պրմ. Վալերի Մկրտումյանն ընդգծեց կառավարության և ՀԿ-ների միջև համագործակցության ամրապնդման կարևորությունը ՈՒՀՍ-ի հաստատման և գործարկման համար: Նա նաև անդրադարձավ այն փաստին, որ հակատրաֆիկինգային միջոցառումների մասնակիցների թիվը աճել է (աշխատանքային հրահանգիչներ և այլն) և ընդգծեց Հայաստանում գործող միջազգային կազմակերպությունների արժեքավոր աջակցությունը:

Օրակարգի հաջորդ ելույթներում ներկայացվեցին փորձագետների բազմակողմանի տեղեկատվական նյութերը տրաֆիկինգի դեպքերի նույնականացման վերաբերյալ (տե՛ս Հավելվածները):

Մասնակիցներին բաժանվեցին ամփոփ օրինակներ և նրանք պետք է որոշեին, թե արդյո՞ք դրանցում կան տրաֆիկինգի տարրեր, և եթե այն, ապա որոնք են այդ տարրերը: Ապա ծավալվեց աշխույժ և մանրամասն քննարկում: Մասնակիցներից շատերն այս խնդրի վերաբերյալ բավարար տեղեկացվածություն ցուցաբերեցին և հիմնավորեցին տրաֆիկինգի տարրերի առկայության վերաբերյալ իրենց եզրակացությունները՝ ելնելով իրենց ունեցած, ինչպես նաև փորձագետների ելույթների շնորհիվ ձեռք բերված գիտելիքներից:

ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Առավոտյան ծրագրի երկրորդ մասում մասնակիցները բաժանվեցին երկու խմբի՝ հետևյալ խնդիրները միասին քննարկելու և քննարկման արդյունքներն ամփոփ ներկայացնելու նպատակով.

- (1) Որո՞նք են «մուտքի կետի» գործակալությունները, որոնք կարող են առաջինը նույնականացնել տրաֆիկինգի ենթադրյալ գոհերին
- (2) Որո՞նք են տրաֆիկինգի ենթադրյալ գոհերի հայտնաբերման ընթացքում ծագող խոչընդոտները
- (3) Ի՞նչ է պետք անել այդ խոչընդոտները հաղթահարելու համար:

Մասնակիցներն ընդհանուր համաձայնության եկան առ այն, որ տրաֆիկինգի ենթարկված անձանց նույնականացման ուղիներ փնտրելը կարևոր է: Խմբերը հանդես եկան հետևյալ պատասխաններով.

ՈՐՈ՞ՆՔ ԵՆ «ՄՈՒՏՔԻ ԿԵՏԻ» ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ԿԱՐՈՂ ԵՆ ԱՌԱՋԻՆԸ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՆԵԼ ՏՐԱՓԻԿԻՆԳԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԶՈՀԵՐԻՆ

- Սահմանային անցակետերը/սահմանապահների կետերը, երբ ճանապարհորդները դուրս են գալիս կամ մուտք են գործում երկիր
- Աշխատանքի տեղափորման գործակալությունները, երբ ստուգում են արտերկրում աշխատել պատրաստվողների աշխատանքային պայմանագրերը
- Իրավապահ մարմինները

- Ընդունող և ուղարկող երկրներում գործող «քեժ գծեր»
- Զոհերի մասին իմացող հարևաններն ու համայնքը
- Իրավաբանները
- Պետական տարրեր մարմինները
- ՀԿ-ները
- Սահմաններում երկրորդային զննում իրականացնող մարմինները

Ամփոփում և վերլուծություն. Հայաստանում կան բազմաթիվ և տարրեր դերակատարներ, որոնց պետք է ներգրավել տուժածների նույնականացման գործընթացում: ՀԿ-ների հետ մեկտեղ, դրանք են՝ սահմանապահները, զքաղվածության պետական գործակալությունները, աշխատանքի տեղավորման մասնավոր գործակալությունները, միգրանտների համայնքները (ինչպես արտագաղթողներն ու պոտենցիալ արտագաղթողները, այնպես էլ ներգաղթողները), իրավապահ մարմինները և այլն:

Ծանուցում. *Տպավորությունն այնպիսին էր, որ մասնակիցների համար իհմնական խնդիրն այն էր, թե ինչպես կարելի է նույնականացնել այն հայերին, ովքեր կարող են տրաֆիկինգի զոհ դառնալ, և նրանց, ովքեր արդեն ենթարկվել են տրաֆիկինգի, հետ են ուղարկվել Հայաստան և այժմ գտնվում են կողմանակի տրաֆիկինգի ենթարկվելու վտանգի մեջ: Բազմիցս հիշատակվում էր կանխարգելման կարևորությունը: Մասնակիցները չեն ձեռ նույնականացման և կանխարգելման գործընթացների մի քանի կարևոր դերակատարներին, ինչպիսիք են, օրինակ, աշխատանքային տեսուչները և առողջապահական համակարգի աշխատողները:*

ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ՏՐԱՖԻԿԻՆԳԻ ԵՆԹԱՐՅԱԼ ԶՈՀԵՐԻ ՆՈՒՅՆԱԿԱՄԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԾԱԳՈՂ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ

- Լայն հանրության համար տեղեկատվության պակաս
- Գրավոր/պաշտոնական աշխատանքային պայմանագրի բացակայություն, փոխարեն՝ բանափոր պայմանավորվածություն պոտենցիալ աշխատակցի հետ
- Տուժածների նույնականացման չափանիշների բացակայություն
- Տրաֆիկինգի տուժածի հետ մանրակրկիտ հարցազրույցի համար ժամանակի պակաս
- Վարկարեկման վտանգ
- Տրաֆիկինգի տուժածները պատրաստ չեն իրենց ինքնությունը բացահայտելուն, ինչը շատ կիեշտացներ հայտնաբերման գործընթացը
- Արտաքսման վերաբերյալ մտավախություն
- Ընտանիքի հետ կապված խնդիրներ
- ՈՒԱՄ-ի ոչ պատշաճ գործարկում

Ամփոփում և վերլուծություն. Զոհերի նույնականացման գործընթացում խոչընդոտները բազմաթեսակ են: Մասնակիցները հատակ չեն պատկերացնում, թե ինչպես պետք է գործեն, ինչ հարցեր պետք է տան, ինչին պետք է ուշադրություն դարձնեն և ինչ է նշանակում «զոհ» բառը գործնականում: Երկրորդ, նրանք այն կարծիքի են, որ լուրջ պատճառներ կան, որոնց թերումնվ զոհերը չեն բացահայտում իրենց: Դրանցից ամենակարևորը վարկարեկման վտանգն է, այն ընդհանուր կարծիքը, որ նրանք մեղքի իրենց բաժինն ունեն այն ամենի համար, ինչ պատահել է իրենց հետ և այն տարածված հանրային կարծիքը, որ նրանք հենց սկզբից ել «մարմնավաճառներ» են եղել: Եվ վերջապես, անգամ եթե մասնագետները (օրինակ՝ սահմանապահները) տրաֆիկինգի որոշ նշաններ են նկատում դեռ մինչև շահագործման տեղի ունենալը, նրանք որևէ

գործողությունների դիմելու իրավասություն չունեն և վստահ էլ չեն, թե ինչ կարող են կամ պարտավոր են անել:

Ծանուցում. *Տպավորությունն այնպիսին էր, որ առկա է ընդհանուր համաձայնություն նույնականացման գործընթացներին առնչվող խնդիրների և խոչընդոտների վերաբերյալ: Ամենաքեժ վիճարանությունը տեղի ունեցավ զոհերի մասին ընդհանուր ընկառումները քննարկելիս (այսինքն՝ ըմբռնման պակաս, վարկարեկման վտանգ և այլն): Մասնակիցները այն համաձայնության եկան, որ դա լուրջ խնդիր է թե՝ հանրության, թե՝ մասնագետների շրջանում: Սի կարևոր հանգամանք՝ «զոհերին նույնականացնելու իրավունքներին» կամ «փրավասության» խնդիրը խմբում շրաբքացվեց: Փոխարենը՝ մասնակիցները մեծ ուշադրություն դարձրեցին իրենց ընդհանուր խնդիրների քննարկմանը, և այն տպավորությունն էր ստեղծվում, որ լարվածությունն ու անապահովությունը կապված էր ոչ թե նրա հետ, թե ով պետք է գրադի տրաֆիկին ենթարկված անձանց նույնականացմանը, այլ ավելի շուտ՝ թե ինչպես դա պետք է անել ըստ պատշաճի և ապա՝ ինչ անել, երբ տրաֆիկին ենթարկված անձն արդեն նույնականացված է:*

Ի՞նչ է ՊԵՏՋ ԱՆԵԼ ԱՅԴ ԽՈՂԸՆԴՈՏՆԵՐԸ ՀԱՎԱՀԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

- Շարունակել իրազեկության մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումները
- Հանրության շրջանակներում տարածել այն մոտեցումը, որ տրաֆիկին ենթարկված անձանց պետք է վերաբերվել որպես անարդարությունից տուժածների, այլ ոչ՝ որպես հանցագործների կամ մարմնավաճառների
- Ամրապնդել ինքնանույնականացման մեխանիզմները
- Վերապատրաստման դասընթացներ կազմակերպել տարբեր մասնագետների՝ հոգեբանների, բժիշկների, իրավապահ մարմինների աշխատակիցների և այլոց համար, որոնք ներգրավված են նույնականացման գործընթացներում
- Գործարկել ՈՒԱՍ-ը
- Խստացնել աշխատանքի տեղավորման գործակալությունների գործունեության հսկողությունը
- Տրաֆիկին ենթադրյալ զոհերի նույնականացման գործընթացի ամենավաղ փուլում ներգրավել տրաֆիկին նախկինում տուժածներին
- Համագործակցել և համակարգել ջանքերը
- Կատարելագործել օրենսդրությունը

Ամփոփում և վերլուծություն: Տվյալ պահին հիմնական խնդիրն է բոլոր մասնակից կողմերի կարողությունների զարգացումը: Խմբերը միահամուր համաձայնեցին, որ վերապատրաստում է հարկավոր, և որ այն չպետք է կենտրոնանա տրաֆիկին ենթարկված անձանց նույնականացման գուտ իրավական ասաելուների վրա: Այն պետք է լինի ավելի ամբողջական և ներառի, օրինակ, հոգեբանական ասպեկտները: Հարկ է ավելի մեծ պարզություն մտցնել այն հարցում, թե կոնկրետ ովքեր են «զոհ» համարվում (թե՝ իրավական, թե՝ «փրական» իմաստով): Այս հարցի առնչությամբ վերապատրաստման, ինչպես նաև նրա օրենսդրական վերանայման կարիքը զգացվում է: Դրա հետ մեկտեղ օգտակար կլինիք որոշակի հստակություն մտցնել այն հարցում, թե ինչ պետք է անել տրաֆիկին ենթարկված անձի հետ նույնականացնելուց հետո (այսինքն՝ ուր կարելի է նրան ուղղողդել և ինչպես): Համաձայնություն ձեռք բերվեց այն մասին, որ ՈՒԱՍ-ը լավ հիմք կարող է ծառայել, սակայն այն գործնականում աշխատող դարձնելու համար անհրաժեշտ է վերապատրաստում կազմակերպել:

Ծանուցում. Թվում է, թե անկախ մասնագիտական կրթուրյունից, մասնակիցները կարծում են, որ անհրաժեշտ է անցկացմել զործնական վերապատրաստում: Դա իմքնին չի լուծի զոհերի նույնականացման հետ կապված բոլոր խնդիրները, սակայն քայլ կլինի այդ ուղղությամբ:

ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԵՐԵՔ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ

Կլոր սեղանի եզրափակման ժամանակ նշվեցին մարդկանց տրաֆիկինգի դեմ պայքարի հետ կապված արդյունավետ պրակտիկայի երեք հետևյալ բաղադրիչները՝ (1) նույնականացում/իդենտիֆիկացիա, (2) տրաֆիկինգի ենթարկված անձանց հետ աշխատելու ընթացքում պատշաճ մեթոդների կիրառում և (3) փոխհամաձայնեցված սկզբունքների վրա խարսխված համագործակցություն: